

3566

3567

3568

3569

Scaphiophryne

9(47.925)

2-24

2 012

ՆՈՅԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵՇՈՒԹԵԱՆՅ

ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՍԵՐ

ՆԻԿՈԼԱՅ ԱԼԷՔՍԱՆԴՐՈՎՉԻ

ՆԻ ԹԱԳՈՒՀԻ ԿԱՅՍԵՐՈՒՀԻ

ԱԼԷՔՍԱՆԴՐԱ ՖԵՕԴՈՐՈՎՆԱՅԻ

р а в а н р н з р и з н р

Մայիսի 14-ին, 1896 թ.

Բ Ա Ք Ո Ւ

Տպարան „Ա. Ր Օ Ր“

1896.


37045
8001

Дозволено цензурою, 11 Октября 1896 года, г. Тифлисъ

115342 - 02



34045



Կարտ ՆԻԿՈԼՍԻ ԻԻ օժտման Եկեղեցու

ՅԱՄԱՆԱԿԱՆ ԲԱՆԻՆ

7-92




Նոցին Կայսերական Մեծութեանց Թագաւոր Կայսր
ՆԻԿՈԼԱՅ ԱԼԷԿՍԱՆԴՐՈՎԻ Եւ Թագուհի Կայսրուհի
ԱԼԷԿՍԱՆԴՐԱ ՖԷՕԴՈՐՈՎՆԱՅԻ քաղաքութիւնը՝

Մայիսի 14-ին 1896 թ.



1896 թ. մայիս ամսուայ ընթացքում
Ռուսաց հին մայրաքաղաք Մոսկուան ամբողջ
քաղաքակիրք աշխարհի ուշադրութեան կենդ-
րոնն էր դարձել. մայիսի 14-ին կատարուեցաւ
Ն. Կ. Մ. Թագաւոր Կայսր Նիկողայ Ալեքսան-
դրովի Եւ Թագուհի Կայսրուհի Ալեքսանդրա
Ֆեօդորովնայի քաղաքութիւնը:

Նոցին Կայսերական Մեծութեանց Մոսկուա ժամանելովն
սկսում են քաղաքութեան հանդէսները, որոնց նախապատրաս-
տութեան սակայն Մոսկուան մի առանձին եռանդով վաղուց ձեռ-
նարկել էր: Մոսկուա էր կենդրոնացած պաշտօնական Պետերբուր-




Յարսկոե. Սելո. Ն. Կ. Մ. ամառանոց:

գի եւ առհասարակ ամբողջ պաշտօնական Ռուսաստանի ահագին մեծամասնութիւնը: Ազնուականութեան, զեմսւմների, քաղաքների, դասակարգերի, գիւղական համայնքների, զանազան դաւանութեանց՝ ներկայացուցիչները, այլ եւ զանազան ընկերութիւնների եւ հիմնարկութիւնների պատգամաւորները շատաւել էին Մոսկուա: Այդ օրերի ժողովրդային շարժումը դեպի Մոսկուա մի չլուած բան էր: Նիկոլաեւսկի գծով օրական մէկ գնացքի փոխարէն, չորսն էր անցնում: Դժուար էր տեղաւորել քաղաքութեան պաշտօնական հիւրերին. գիւղական սանուսերների համար վարձուած էր Կօրչի քաւրոնը. բեմը փոխարկուած էր սեղանասան 620 հոգու համար. մնացած սենեակները ննջարանների: Օտարազգի հիւրերի համար պատրաստուած էր «Շուէյցարիա» հիւրանոցը:

Հանդեսներին առանձին փայլ էր տալիս օտար երկրներից ժողովուած բարձրագոյն անձանց եւ պատգամաւորութեանց ներկայութիւնը: Համարեա բոլոր պետութիւնները Մոսկուա էին ուղարկել իրանց ներկայացուցիչներին: Այդ բոլոր հիւրերը զետեղուած էին ոչ թէ միայն յարմար, այլ նոյն իսկ շքեղ եւ փառաւոր բնակարաններում: Օրինակ. Չինաց դեսպանութիւնն իջել էր յայտնի միլիոնատէր քեյաւանաու Պերլովի տանը: Ամբողջ տունը զարդարուած էր զանազան՝ դեղին եւ կարմիր կտորներով: Ընդունարանի սաւերներ մօտ 40.000 ռ. էր նստել. պատասանների փոխանակ պատերն ամբողջապէս ծածկուած էին ոսկի եւ արծաթի քանդագին խաիրներով: Սենեակներից մէկում դրուած էին վանդակներ՝ Ներսիսային անձանց զանազան քոչուններով:

Մամուլն էլ շատաւել էր իր ներկայացուցիչներին Մոսկուա ուղարկել: Բացի Ռ. քերթերի բազմաթիւ (մօտ 100) քղբակիցներից քաղաքութեան հանդեսներին ներկայ էին 75-ից աւելի լրագրողներ զանազան երկրներից: Թղթակիցներին տրուած էր ամեն տեսակ յարմարութիւն եւ դիւրութիւն հանդեսները դիտելու եւ նկարագրելու: Նրանք ազատ մուտք ունեին եւ յատուկ տեղեր հանդեսներում: Օտար քղբակիցներից շատերը օրական մինչեւ 2000 խօսք էին հեռագրում:

Ինքը Մոսկուան զարդարուած եւ սարնուած էր մի առանձին շքեղութեամբ: Տվերսկայա փողոցի վրայ, որտեղից պիտի անցներ Ն. Կ. Մեծութեանց հանդիսաւոր մուտքը Մոսկուա, շարքով կանգնեցրած էին կամարներ եւ սիւներ: Տները զարդարուած էին զանազան կտորներով եւ բազմաթիւ դրօշակներով: Կեմլը քաղված էր էլեքտրական կրակների մէջ: Հսկայական հրավառութիւնների պատրաստութիւններն արդէն օր առաջ տեսնուած էին: Խօզինսկոյէ դաշտի վրայ ժողովրդային մեծ զբօսանք պիտի կատար-



Թագադրութիւն. Կրեմլը Խրախաղութեան ժամանակ:

րուէր. այսեղ շինուած էին չորս բաց բեմ, ցիրկ եւ բազմաթիւ բուժեցներ, որտեղ ժողովուրդը պիտի հիւրասիրուէր. ի միջի այլոց որոշուած էր բաշխել 400.000 երշիկ, 1000 սակառ զարեջուր: Թագադրութեան հանդեսների այդ հսկայական նախապատրաստութիւնները տեղի տուին զանազան լուրերի՝ ծախքերի մասին. ասողներ եղան, որ մինչեւ 50 միլ. ծախք կը լինի: Սակայն դա չափազանցութիւն էր: Դրան նախարարութիւնը ծախսեց 8 միլ. ոչ աւել. զինուորական նախարարութիւնը՝ զօրքի տեղափոխութեան համար մեկ միլիոն: Մնացած վարչութիւններն աւելի քիչ են ծախսել:

Մայիսի 6-ին Ն. Կ. Մեծութիւնները ժամանեցին Մոսկուա: Չնայելով ցրտին եւ քամուն, չնայելով որ առաւօտեանից սկսած անձրեւը չէր դադարում, ժողովուրդը իմանալով Արքայական Տան գալուստը, անագին խմբերով դիմում էր դէպի Մոսկուա-Բրեստի երկաթուղին, որտեղ պիտի կանգնէր Արքայական գնացքը: Վոգզալից Պետրովսկի պալատը սանող նախապարհի ամբողջ երկարութեամբ ժողովուրդը կանգնած էր խիստ առ խիստ՝ նախապարհի երկու կողմը եւ այդպիսով կազմում էր կենդանի պարիսպ: Ժողովուրդը լուռ սպասում էր գնացքին: Ահա լուսեցան ազդարար փողերի ձայները. քնդաց ուռան եւ ժողովրդի ցնձալից աղաղակներով գնացքը կանգ առաւ: Սմոլենսկի վոգզալում դիմաւորեցին պատուաւոր պահապանները, պալատական բարձր պաշտօնեաները, Կայսերական Տան անձինք եւ օտար բազաւորագունները:


Նոցին Կայսերական Մեծութիւնները դիմեցին Պետրովսկի պալատը, որտեղ Կայսրը աղ ու հաց քնդունեց Մոսկուայի զեմս-վոյից: Պետրովսկի պալատը, որի գոյութեան սկիզբը անցեալ դարից չի անցնում, զտնւում է Մոսկուայից երեք վերս հեռաւորութեան վրայ: Պալատը յիշեցնում է միջնադարեան ամրոցները: Շրջապատուած է երեք կողմից ծառասանով, որ տարածում է մինչեւ Մոսկուայի գիծը: Այդտեղ են իջնում Ռուսաց կայսրերը՝ նախ քան Մոսկուա հանդիսաւոր մուտք գործելը: Մայիսի 7-ին Կայսրը քնդունեց Բոլխարայի էմիրին եւ եւրպայի խանին:

Մայիսի 8-ին Մոսկուա ժամանեց այրիացեալ Թագ. Կայսրուհի Մարիա Ֆեոդորովնան: Երեկոյեան ժամի 9-ին Պետրովսկի պալատում տեղի ունեցաւ մի հսկայական սերեմադա, որին մասնակցում էր 1200 հոգի: Մայիսի 9-ին Կայսրը հանդիսաւոր մուտքն էր Մոսկուա: Այդ օրը Մոսկուան մեծ հանդիսով եւ արժանաւոր կերպով տօնեց: Հանդէսը սկսուեց կեսօրին՝ Տայնիցկի աշտարակից արձակումը քնդանօթի 21 քնդիւնով: Ժամի 2¹/₂-ին քնդանօթի որոտմունքները Պետրովսկի պալատից՝ Մոսկուային աւետում էին, որ Կայսրը նստեց ձի: Գնացքը ուղղուեց: Գնացքը բաց էր անում ոսթկանապէս եւ

12 ժանդարմ: Առջեւից գնում էին Ն. Մեծուքեան քիկնապահներից կազմուած խումբը, բոլով 400՝ արքայական դրոշակով, Ռուսաստանին ստորադրեալ ասիական զանազան ազգերի պատգամաւորութիւնները՝ բոլով 40 հոգի. այդտեղ կային քիւրմէններ, քէֆէներ, սարքեր, դրդներ եւ կովկասեան զանազան ցեղերի ներկայացուցիչներ, որոնք ընդհանուր ուշադրութիւնը գրաւում էին իրանց արտաքինով, հոխ զարդարանքներով եւ իրանց ձիանց սարքով: Դրանց հետեւում էին պալատական պաշտօնեաներ եւ Պետական խորհրդի անդամները, ոմանք հեծեալ եւ ոմանք էլ ոսկեզօծ վեցձի կառքերի մէջ նստած: Հեծելազօրքի զնդերը միմեանց յաջորդում էին: Իսկ յետոյ Կայսրը սպիտակ ձի հեծած, որին ուղեկցում էին մեծ իշխանները, օտար քաղաւորազունները եւ բազմաթիւ փայլուն շախումբը: Կայսրին հետեւում էին երկու կայսրունհիները՝ ոսկեզօծ կառքերով վեց-վեց սպիտակ ձի լծած: Ժամի 4-ին Կայսրը՝ Սպասսկիյ Դռներից մուտք գործեց Կրեմլը:

Այդ հանդիսաւոր զնացքի ժամանակ, յաղթական նոր կամարների մօտ Կայսեր դիմաւորեցին Մոսկուայի գեներալ գուբերնատօր Մեծ իշխանը. հին յաղթական դռների մօտ Զեմլեանոյ ֆաղաք մտնելու ժամանակ՝ ֆաղաքի ինքնավարութեան անդամները. Սպիտակ ֆաղաքը մուտք գործելու ժամանակ՝ Մոսկուայի զեմսվոյի ներկայացուցիչները, Վոսկրեսնիե Դռների մօտ՝ Մոսկուայի նահանգապետը, վարչական եւ դատական հիմնարկութիւնները: Կրասնայա հրապարակի վերայ շարքով կանգնած էին զիւղական համայնքների բոլոր աւագները: Իւան Մեծի զանգասան մօտ տիբունների վրայ նստած էին Բուխարայի էմիրը եւ Խիւայի խանը: Ուսպենսկիյ տանարի գաւթում դիմաւորեց բարձր հոգեւորականութիւնը, որից յետոյ Ն. Կ. Մեծութիւնները, դուրս գալով Կրասնոե Կրիլցօն՝ ողջունեցին ժողովրդին եւ մտան Կրեմլի պալատը:

Մոսկուա հանդիսաւոր մուտք գործելուց յետոյ՝ Ն. Կ. Մեծութիւնները—նոյն օրը երեկոյեան տեղափոխուեցան Ալեքսանդրովսկի Նեսկուչնի պալատը, ուր պիտի անցկացնէին քս Ռ. եկեղեցւոյ կանոնաց փառութեան օրերը: Հետեւեալ օրը մայիսի 10-ին Կրեմլի մեծ պալատում դեսպանների հանդիսաւոր ընդունելութիւն եւ: Ներկայացան Ֆրանսական, Իսպանական, Հապոնական, Կորեայի եւ Միացեալ Նահանգների դեսպանութիւնները: Իւրաքանչիւր դեսպանութեան հետեւում եւ արարողապետը՝ երկու ընթերականներով: Իւրաքանչիւր դեսպան Կայսրին ներկայացնում եւ դեսպանական մարմինը: Մայիսի 11-ին մունեսթիկները սկսեցին հանդիսաւոր կերպով յայտարարել քաղաքութեան մասին: Խումբը բաղկացած եւ քիկնապահ հեծելազօրքից, փողհարներից, ֆնարահարներից, քմբկա-



Հ ե Ր Ո Ղ

հարմերից, երկու աւագ արարողապետներից՝ ոսկե գաւազաններով, երկու հերոդներից եւ չորս արարողապետներից. մունեսիկները հագած էին միջնադարեան հագուստ: Նրանց ոսկեկար նափոփների կռնակի եւ կրծքի վրայ ասեղնագործած եր պետական մեծ զինական դրոշները: Իւր կատարեալ կազմով խումբը գտնուում էր Սեմասկայա եւ Կրասնայա հրապարակներում, յետոյ բաժանւելով երկու մասի, սկսեցին ֆաղափ գնազան մասերում յայտարարել քաղաքութեան օրը: Ըստ հրամանի՝ հերոդները բարձրացնում էին գաւազանները՝ փողհարները փչում էին ի ժողով, ժողովուրդը մերկացնում էր գլուխը եւ ապա Սեմասի փարսուղարը կարդում էր. «Ամենապայծառագոյն ինքնակալ Մ. քաղաւոր Կայսր Նիկոլայ Ալեքսանդրովիչը բարձրանալով իւր Նախնեաց Ռուսական, այլ եւ նրա հետ անբաժան Լեհական քաղաւորութեան եւ Ֆինլանդական գահը, ըստ եղանակի կայսերաց՝ իւր նախնեաց՝ բարեհաճեց հրամայել. Ն. Կ. Մեծութեան սրբազան քաղաքութիւնը եւ Ամենաբարձրեալ շնորհիւ սուրբ մեռնող օծուելը լինի այս մայիսի 14-րորդ օրը. այս սրբազնագործութեան Ն. Կ. Մեծութիւնը հրամայեց հաղորդակից անել նաեւ իւր ամուսնուն՝ քաղուհի Կայսրուհի Ալեքսանդրա Ֆեոդորովնային: Այս հանդիսի մասին այսու յայտարարուում է բոլոր հաւատարիմ հպատակներին, որպէսզի այդ րդայի օրը իրանց աղօթքները կրկնապատկեն առ քաղաւորն քաղաւորաց եւ բոլ նա իւր Ամենակարող օրհնութեամբ հովանի լինի Նորին Մեծութեան քաղաւորութեան եւ բոլ հաստատեալ նրա մէջ հաշտութիւն եւ խաղաղութիւն ի փառս իւր եւ յանձարժ բարօրութիւն պետութեան»: Ընթերցումից յետոյ հերոդները ժողովրդեան բաժանում էին տպած յայտարարութիւններ, իսկ նուագածուները անում էին ազգային օրհներգը: Մայիսի 12 եւ 13-ին նոյն եղանակով շարունակուեց յայտարարութիւնը Մոսկուայի գնազան հրապարակներում եւ փողոցներում:

Ժամը 4-ին Օրոժեյնիյ պալատի գահական դահլիճում կատարուեցաւ պետական դրօշի օրհնութիւնը: Նուիրագործում էր աւագ ֆահանայ Նանիշեւ, որը դրօշի օրհնութիւնից յետոյ ասաց հետեւեալը. «Բարեպաշտ քաղաւոր! Աստուծային Նախախնամութեան հանդէպ եղաւ, գահակալութեան օրհնով յանձնել Քեզ Ռուսական քաղաւորութեան ստորագրեալ ազգերի ինքնակալ առաջնորդիդ՝ նրա միութեան եւ ուժի այս դրօշը. բոլ սա միացնէ Քո բոլոր հպատակներդ ինքնայօժար անձնութիւններով դէպի գահը եւ հայրենիքը եւ բոլ իւրաքանչիւրն իր հայրենասիրական պարտքը սիրով կատարէ: Ռուսիայի բնամիւսների համար անարկու այս դրօշը բոլ լինի Քեզ համար նշան օգնութեան ի վերուստ, որպէս զի ի փառս

ամենասուրբ Անուան Տեառն Աստուծոյ մերոյ, ուղիղ հաւատոյ, բարւոյ եւ նշմարութեան շաղկով, փառքար, ուր չդարձնելով ոչ մի արգելի, առաջնորդես ժողովրդիդ դէպի բարօրութիւն, մեծութիւն եւ փառք: Եւ բոլ յայտնի լինի ամենայն լեզուաց, զի Աստուած ընդ մեզ է»:

13-ին հանդիսաւոր կերպով կայսերական ռեզալիաները Օրոժեյնիյ պալատից տեղափոխուեցան Կրեմլի մեծ պալատի գահական դահլիճը:

Մայիսի 14-ին կատարուեցաւ ս. քաղաքութիւնը: Այդ օրը վաղ առաւօտեան Մոսկուան սկսեց շարժուել. գնում է ժողովուրդը, գնում է զօրք նուագածութեամբ. բոլորեքեանք դիմում են դէպի Կրեմլը: Եղանակը խաղաղ էր. արեւը փայլում էր: Առաւօտեան ժամի 5-ից սկսած զօրք բռնեց Կրեմլը: Ժամի 7-ին Իւան Մեծի զանգը սկսեց ղողանջել: Կրեմլի պարիսպներից լսելի եղան բնագոթի 12 հարուածներ: Ուսպեհսկիյ Տանար հասաւ հոգեւորականութիւնը՝ երեք միսրոպոլիսների առաջնորդութեամբ: Ժամի 9-ին եկեղեցի մտաւ Այրիացիալ Կայսրուհին քաղով եւ ծիրանիով պսակուած: Բոլոր զանգերի ղողանջիւնով սկսուեց Ն. Կ. Մեծութեանց հանդիսաւոր գնացքը: Առջեւից գնում էին երկու արարողապետ, որոնց նետելում էին զիւղական համայնքների սանուկները, ֆաղափազուխները, Ֆինլանդական պատգամաւորները, զեմսկուների ներկայացուցիչները եւ այլն: Ամենից յետոյ գնում էին բարձր պաշտօնեաները, մինիստրները եւ պետական խորհրդի անդամները: Այդ բոլորին հետեւում էր ռեզալիաները Տանիլու արարողութիւնը: Թիկնապան հեծեալներից յետոյ, Կրասնօե Կրիչօյի վրայ երեւացին Նոցին Մեծութիւնները: Ժողովուրդը սկսեց զխաբաց խաչակնել: Կայսրին հետեւում էին Կայս. Պալատի եւ զինուորական մինիստրները, զլիսաւոր բնակարանի հրամանատարը, օրապան գեւ. — աղիւսանք, Նորին Մեծութեան շփամբի գեւ. — մայօր եւ Ֆիլդ — աղիւսանք եւ հեծեալ քիկնապանների զնդի հրամանատարը՝ մերկացած սուրը ձեռքին բռնած: Գնացքը մեծ հանդիսով շարժուեց դէպի եկեղեցի: Եկեղեցու գալքում Ն. Կ. Մեծութեանց դիմաւորեց Մոսկուայի միսրոպոլիսը: Գնացքը փակում էին տոնային ազնուականների եւ անուանի վաճառականների շարքերը: Կայսրը հագած էր Պրեօբրաժնսկիյ զնդի մուկիր, գնդապետի ուսադիրներով եւ Անդրեյ Պերվօզմաննու ժապաւեկով:

Կայսրը բազմեց Միխայիլ Ֆեոդորովիչի գահի վրայ, իսկ կայսրուհին Իօանն III-ի: Ժամը 10-ին սկսուեց ս. քաղաքութեան հանդիսաւոր ծէսը: Դէպի գահը տանող ասիւնաններով բարձրացաւ ս. Պետերբուրգի միսրոպոլիս Պալլադին եւ դարձաւ Ն. Կ.

Մեծուքեան ըստ օրինաց հետեւեալ խօսեցեալով.


«Ամենաբարեպաշտ մեծ քաղաւոր Կայսր մեր եւ ինքնակալ ամենայն Ռուսաց. որովհետեւ Աստուածային հանութեամբ եւ Ձեր բարեհաճութեամբ այժմ այստեղ այս նախաքող սահաբում պիտի կատարուի Ձերդ Կ. Մեծուքեան քաղադրութիւնը եւս. մեռնով օծուելը, ուստի քող բարեհաճե Ձերդ Կ. Մեծութիւնը, ըստ սովորութեանց նախնի քրիստոնէայ Միապետների, ի լուր Ձեր հպատակների խոստովանել ուղղափառ հաւատը»:

Կայսրը կարդաց իլուր հաւատոյ հանգանակը, որից յետոյ միտրոպոլիսն արտասանեց. «Շնորհիւ Ս. Հոգւոյն եղիցի ընդ քեզ. Ամեն» եւ իջաւ ամբիոնից:

Աւետարանից յետոյ, Պետրբուրգի եւ Կիեւի միտրոպոլիսները բարձրացան գահական տեղը՝ քաղաւոր Կայսեր ծառայելու—զգեսաւորութեան ժամանակ: Ն. Կ. Մեծութիւնը վերցնելով ս. Առաքեալ Անդրէյ Պերվոզվաննու սովորական շղթան, հրամայեց իւր վրայ ձգել ծիրանին: Ծիրանին հագնելուց յետոյ, Կայսեր մօտեցաւ Պալլադի միտրոպոլիսը: Թագաւորը խոնարհեցրեց գլուխը, միտրոպոլիսը ձեռքը խաչաձեւ գլխին դրած երեք անգամ օրհնեց Կայսեր գլուխը եւ կարդաց սահմանուած աղօթքները: Թագաւոր Կայսրը հրամայեց իրան մատուցանել քաղը, որն եւ դրաւ գլխին: Միտրոպոլիսը ասաց. «Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն արքայ, ամեն»:

Դրանից յետոյ Ն. Կ. Մեծութեան մատուցին զայիտոնը եւ խաչակիր զնդակը: Ն. Կ. Մեծութիւնը երկու արքայական նշանները դնելով բարձի վրայ, բարեհաճեց իւր մօտ հրաւիրել Թագուհի Կայսրուհի Ալեքսանդրա Գեորգիււնային, որն, իջնելով իւր գահից իւր Օգոստափառ ամուսնու առաջ, որ այդ ժամանակ նստած էր գահի վրայ, քաւեայ բարձի վրայ ծունկ չոյն: Միապետը իւր գլխից վերցնելով քաղը, դիպցրեց քաղուհու գլխին եւ կրկին իւր գլխին դրաւ:

Այդ ժամանակ միտրոպոլիսը մատուց փոքրիկ քաղը Կայսրին որն եւ դրաւ իւր Օգոստափառ ամուսնու գլխին: Ապա Ն. Կ. Մեծութեան մատուցին ծիրանին եւս. Առաքեալ Անդրէյ Պերվոզվաննու աղամանդեայ շղթան: Կայսրը՝ ընդունելով այդ արքայանշանները, հագցրեց քաղուհի Կայսրուհուն, որն այդպէս զգեսաւորուելուց յետոյ, կրկին իւր տեղը կանգնեց: Թագաւոր Կայսրը համբուրեց Թագուհուն: Թագաւորը եւ Թագուհին նստեցին գահերի վրայ: Աւագ սարկաւազը կարդաց մաղթանք Կայսեր արեւելասութեան համար: Մոսկւա գետի վրայ որոշաց քնդանօրը 101 անգամ: Հոգեւորական եւ աշխարհական՝ չհեռանալով իրանց տեղերից՝ իրանց շնորհաւորութիւնները մատուցին Ն. Կ. Մեծութեան, երեք անգամ գլուխ իջեցնելով: Թագուհի Կայսրուհին եւ բոլոր Օգոստափառ անձինք



Թագաւոր Կայսրը քաղը դնում է Կայսրուհու գլխին:

նոյնպէս ողջունեցին թագաւոր Կայսրին: Մեծ իշխանները եւ իշխանութիւնները, նոյնպէս եւ օսարագգի օգոստափառ հիւրերը՝ շնորհաւորելու համար զահական տեղն էին ելնում:

Երբ որ լսելի եղան բնդանօրածութեան եւ զանգահարութեան ձայները, Կայսրը վեր կենալով զահոյժից եւ գայիսոնն ու ինքնակալական գունդը ընթերակային յանձնելով՝ ծունկ չոյնց եւ գրքի վրայ կարդաց սահմանեալ աղօթքը, որով խոստովանելով Աստուծոյ զօրութիւնը եւ մեծութիւնը, խնդրում է նրանից իմաստութիւն արձակից իւր, որով կարողանայ ամեն բան արդարութեամբ անել ըստ կամաց եւ հանդից նորա յօգուտ իրան յանձնուած ժողովրդեան: Թագաւորը վեր կացաւ: Բոլոր ներկայ եղողները ծունկ չոյնցին, միայն Կայսրն էր կանգնած զահոյժի մօտ, ծիրանին ձգած եւ քազը գլխին: Պալլադիյ միսրոպոլիսը ծունկ խոնարհած՝ ժողովրդի կողմից կարդաց սահմանեալ աղօթքը, որով խնդրում էր Աստուծուն՝ թալ իմաստութիւն ամենաբարեպաշտ թագաւորին իւր մեծ պաշտօնը կատարելու, լինել դասաւոր արդար, յաղթող բռնամեաց եւ անարգու եւ հայր իւր հպատակների:

Դպիրները երգեցին «Ձեզ Աստուած, գովեմք», որի ժամանակ հնչում էր Իւան Մեծի (զանգ) ձայնը եւ դրանով վերջացաւ սրբազան թագադրութեան կարգը:

Թագուհի Կայսրուհիները եւ բոլոր օգոստափառ անձերը ողջունեցին թագաւոր Կայսրին՝ աստիճաններով բարձրանալով զահական տեղը: Մայր Կայսրուհին գրկեց իւր արքայորդուն եւ համբուրեց նրան, յետոյ գրկեց եւ համբուրեց Թագուհի Կայսրուհի Աշխատանքաւ Յեղորոշմային: Թագաւորը համբուրուեց իրան շնորհաւորող բոլոր օգոստափառ անձանց հետ:

Ապա սկսուեց պատարագը: Ն. Կ. Մեծութիւնը բարեհաճեց վերցնել քազը: Ժամերգութիւնը իւր կարգով կատարուում էր. միայն աւետարանի ընթերցումից յետոյ, երկու աւագ ֆահանայ մասուցին աւետարանը Ն. Կ. Մեծութեան համբուրելու:

Բեմի վրայ հաղորդուեցան սրբազնագործողները: Բացուեցան Արքայական Դռները եւ դուրս եկան երկու աւագ ֆահաններ՝ երկու աւագ սարկաւազներով: Աւագ ֆահանաներից մէկը դարձաւ Կայսրին այս խօսքերով. «Ամենաբարեպաշտ մեծ թագաւոր Կայսր մեր եւ ինքնակալ ամենայն Ռուսաց. Ձերդ Կայսերական Մեծութեան օման եւ ս. հաղորդութեան ժամը հասել է. ուստի քող բարեհաճի Ձերդ Կայսերական Մեծութիւնը այս մեծ տոնարում մօտեցաւ Արքայական Դռներին»: Թագաւոր Կայսրը վրայից առաւ սուրը եւ պալատական բարձր աստիճանաւորների առաջնորդութեամբ ուղղուեց դէպի Արքայական

Դռները: Թագաւոր Կայսրին հետեւում էր Թագուհի Կայսրուհին:

Երբ Դռներին մօտեցաւ, կանգնեց ոսկե դիպակի վրայ, իսկ Կայսրուհին կանգնեց զահի եւ աստիճանների մէջ տեղը՝ բեմի առաջ: Այդ ժամանակ Պալլադիյ միսրոպոլիսը կատարեց Ն. Կ. Մեծութեան օմումն: Վերցրեց ս. մեռնի քանգագին անօրը. օծեց Թագաւորի նախ նակասը եւ յետոյ աչքերը, բերանը, ախանջները, քրտակները, կուրծքը եւ ձեռքերի երկու կողմերը: Կիւելի միսրոպոլիսը օծած տեղերը սրբում էր բամբակով: Այդ արարողութիւնը յայտնուեց զանգահարութեամբ եւ բնդանօրածութեամբ 101 անգամ: Ս. օմումն ընդունելուց յետոյ, Կայսրը կանգնեց աջ կողմը Ս. Փրկչի պատկերի դիմաց: Յետոյ Արքայական Դռներին մօտեցաւ Թագուհի Կայսրուհին եւ կանգնեց նոյն ոսկե դիպակի վրայ: Պետերբուրգի միսրոպոլիսը օծեց Թագուհուն միայն նակասը. Մոսկուայի միսրոպոլիսը սրբում էր օծած տեղը: Ս. օմումից յետոյ Թագուհի Կայսրուհին կանգնեց ձախ կողմը: Պետերբուրգի միսրոպոլիսը Ն. Մեծութեանը Արքայական Դռներից բեմի ներսը տարաւ, ուր Կայսրը հաղորդուեց, ըստ արքայական կարգի, այսինքն Քրիստոսի մարմինն առանձին եւ արիւնն առանձին: Բեմից դուրս գալով, Ն. Կ. Մեծութիւնը նորից մօտեցաւ Փրկչի պատկերին: Ապա Պալլադիյն հաղորդութիւն տուաւ Թագուհուն, սովորական կարգով: Հաշակուելուց յետոյ Թ. Կայսրուհին մօտեցաւ Թագուհի Կայսրուհի Մարիա Յեղորոշմային եւ համբուրուեցան միմեանց հետ: Օմումից եւ հաղորդութիւնից յետոյ Ն. Կ. Մեծութիւնները մօտեցան իրանց զահերին: Պատարագի վերջում Թ. Կայսրը խաչը համբուրեց, քազը դրաւ գլխին, ձեռքն առաւ գայիսոնը եւ աշխարհակալ գունդը եւ ընդունեց շնորհաւորութիւններ հոգեւոր եւ աշխարհական անձանց կողմից, որոնք տեղից չշարժուելով, շնորհաւորում էին զուրա իջեցնելով երեք անգամ: Շնորհաւորութիւններից յետոյ Թագուհի Կայսրուհի Մարիա Յեղորոշմային՝ թագաւորական տան օգոստափառ անձանց եւ օսար թագաւորագունների ուղեկցութեամբ դուրս գալով հարաւային դռներից, առաջուկ կարգով եւ հանդիսով վերադարձաւ Կրեմլի պալատ, որից յետոյ Օգոստափառ Ձոյզը դուրս եկաւ հիւսիսային դռնից, ուր սպասում էին գեներալ ադիւտանտները՝ ամպհովանին բռնած: Թագաւոր Կայսրը՝ ծիրանին հագած, քազը գլխին, գայիսոնը եւ աշխարհակալ գունդը բռնած, կանգնեց ամպհովանու տակ: Ն. Կ. Մեծութեան յետեւի կողմում կանգնեց Թագուհի Կայսրուհին նոյնպէս քազով եւ ծիրանով պսակուած: Երբ գնացքը շարժուեց, զանգերը սկսեցին ղօղանջել, բնդանօրները որոտալ, հնչեց ազգային օրհներգութեան ձայնը: Ժողովրդի ցնծութեան ձայներին չափ ու սահման չկար: Բարձրագոյն գնացքը

հանապարհին կանգ առաւ Արխանգելսկի սանարի մօտ. Թագաւոր Կայսրը եւ Թագուհի Կայսրուհին մտնելով սանար, համբուրեցին ս. մասունքները եւ երկրպագեցին իրանց հարանց անիւններին: Տանարից Արխանգելսկի Զոյգն ուղղուեց դէպի Բլագովէշենսկի եկեղեցին, այնտեղից Կրասնօե Կրիլցօ: Կրասնօե Կրիլցօյից Թագաւոր Կայսրը եւ Թագուհի Կայսրուհին՝ ըստ հին սովորութեան ռուսաց, գլուխ տուին ժողովրդին երեք անգամ, որի ժամանակ ժողովրդի ցնձալից աղաղակները օդը թնդացնում էին:

Ժամը 1-ից մինչեւ երեքը, այսինքն թագադրութիւնը վերջանալուց մինչեւ Թագաւոր Կայսրը դուրս գալը եւ Գրանովիսիյ պալատում պատրաստուած սեղանին մերձեցալը, բոլոր այն աստիճանաւորները եւ այն անձինք, որոնք մասնակցել էին գնացքին դէպի Ուսպենսկի սանարը եւ սանարում եղածները մնացին Կրեմլի պալատի դահլիճներում: Օտարազգի դեսպանները իրենց աստիճանաւորներով՝ հրաւիրուած էին նաեւ Ոսկե պալատ: Ըստ ռուսաց հին սովորութեան օտարազգիները չեն կարող այդ օրը ներկայ լինիլ Ն. Կ. Մեծութեանց սեղանին Գրանովիսիյ պալատում:

Ուղիղ ժամը 3-ին Թագաւորը եւ Թագուհին արքայական զգեստաւորութեամբ մտան Գրանովիսիյ պալատ, որտեղ արդէն զտնուում էին բարձր հոգեւորականութիւնը, առաջին եւ երկրորդ դասակարգի երկու սեռի անձինք եւ ուրիշ աստիճանաւորներ, որոնք կանգնած էին իւրաքանչիւր իր բռնելիք տեղի մօտ:

Ն. Կ. Մեծութիւնները բազմեցին այն զանեւի վրայ, որոնք առաւօտեան Ուսպենսկիյ սանարումն էին: Գանեւի երկու կողմերում կանգնած էին Ն. Կ. Մեծութեանց ընթերականները եւ առաջին կարգի աստիճանաւորները: Հեծեալ քիկնապահների հրամանատարը՝ մերկացրած սուրը ձեռքին եւ սաղաւարտը գլխին կանգնած էր Ն. Կ. Մեծութեան զանոյքի յետեր:

Վեց սենեկապետներ զահական տեղը դրին սեղանը եւ սպասներ՝ Ն. Կ. Մեծութեանց համար: Սեղանի երկու կողմում տեղ բռնեցին աւագ սակառապետը եւ աւագ մասակարարը: Գանի հանդիպակաց կողմը կանգնած էին գլխաւոր մարաշախտը, աւագ հոֆ—մարշալը, գլխաւոր արարողապետը, իսկ արանց ետեւի կողմը թագադրութեան արարողապետները՝ գաւազանը ձեռքներին: Նրբամեն մեկը իր տեղը բռնեց, ելեւմտից նախարարը Ն. Կ. Մեծութեան հրամանով մատոյց Թագուհի Կայսրուհիներին բարձրագոյն թագադրութեան առթիւ պատրաստուած շմանեանները: Միաժամանակ այդ շմանեանները բաժանուեցան Գրանովիսիյ պալատում զտնուող պալատական աստիճանաւորներին եւ ուրիշ անձանց:

Գրանից յետոյ Ն. Կ. Մեծութեան նշանով ծայրագոյն մար-



Օծման հանդիսից յետոյ՝ հանդիսաւոր թափոր Կրեմլի եկեղեցիների շուրջը:

շալը, աւագ հոֆ—մարշալը, գլխաւոր արարողապետը, հոֆ—մարշալները եւ արարողապետները գլուխ խոնարհեցնելով Կայսրի առաջ, դուրս եկան առաջին տեսակ կերակուրը մատուցանելու համար, որն եւ ներս բերուեցաւ յիշեալ անձանց առաջնորդութեամբ: Այդպէս էլ եւ միւս տեսակները: Բարձրագոյն սեղանի վրայ կերակուրները դնում էր աւագ մատակարարը: Առաջին կերակուրը մատուցանելուց յետոյ, Թագաւորը գլխից քազը վերցնելով, նոյնպէս եւ գայիսոնն ու աշխարհակալ գունդը, յանձնեց արքայական նշանները կրող անձանց, որոնք եւ դրին նշանակուած սեղանի վրայ:

Մոսկուայի միտրոպոլիսը նաեւ օրհնեց: Առաջին կերակրից յետոյ, Ն. Կ. Մեծուքիւնը բարեհաճեց հարցնել խմելու մասին: Աւագ սակառապէս կոմս Ստրոգանովը Ն. Կ. Մեծութեան մատուցուած մատուցարանի վրայ մեղր՝ հին արծաթեայ գաւաթի մէջ. այդ բոյակին, ըստ սովորութեան, հոգեւորական եւ աշխարհական անձինք գլուխ խոնարհեցնելով Ն. Կ. Մեծութեան առաջ, նստեցին իրանց սեղը նաշելու, իսկ դիպլոմատիական մարմնի անդամները գլուխ տուին եւ դուրս եկան պալատից՝ երեսներն առանց դռներին դարձնելու: Հաշկերոյքը շարունակուեց իր կարգով: Բարձրագոյն սեղանին ծառայում էին սենեկապետները եւ մանկալիկները. գաւաթները մատուցանում էր աւագ սակառապէսը, որ եւ առաջարկում էր կենաց բաժակներ: Իւրաքանչիւր կենաց ընդունում էր քնդանօթաձգութեամբ եւ երաժշտութեամբ: Հաշկերոյքը ժամը 4-ին, որից յետոյ Թագաւոր Կայսրը կրկին դրաւ քազը գլխին եւ վերցնելով գայիսոնն ու աշխարհակալ գունդը՝ Թագուհի Կայսրուհիներին ուղեկցութեամբ ուղղուեց դէպի գահական դահլիճը եւ իր արքայական նշանները քողնելով, հեռացաւ ներքին սենեակները՝ Ն. Կ. Մեծութեանց հետ հանգստանալու:

Մայիսի 15-ին շնորհաւորութեանց Բարձրագոյն ընդունելութիւններն էին: Մայիսի 15-ին Կրեմլի պալատի գահական դահլիճում Ն. Կ. Մեծութիւններն ընդունեցին շնորհաւորութիւններ ս. Սիմոնի անդամներից եւ բարձր հոգեւորականութիւնից, օսար քրիստոնեայ դաւանութեանց հոգեւոր անձինքներից, բարձր աստիճանաւորներից, ազնուականութեան, գեմասլոնների եւ ֆադաւների, Ֆինլանդական Մեծ իշխանութեան պատգամաւորներից եւ վանականականութեան ներկայացուցիչներից: Կայսրն առջեւից անցան յաջորդաբար զանազան պատգամաւորութիւններ, որոնց թիւը 1200 հոգուց անցնում էր: Ընդունելութիւնները շարունակուեցան նաեւ 16-ին եւ 17-ին:

Թագադրութիւնից յետոյ տոները, հանդեսները դեռ շարունակվեցան մինչեւ համարեա մայիսի 26-ը, որ օրը

Ն. Կ. Մեծութիւնները բարեհաճեցան Մոսկուային հրաժեշտ ասլ:

16-ին հաշկերոյք էր Կրեմլի մեծ պալատում: Կրեմլի ամբողջ բակը բռնուած էր կառքերով. հրաւիրուածների թիւը հասնում էր 5000-ի: 18-ին, 19-ին, 20-ին եւ 21-ին նաեւ տուին Ֆրանսական դեսպանութիւնը, Մոսկուայի գեներ. նահանգապետը եւ Աւստրիական դեսպանութիւնը:

18-ին նշանակուած էր ժողովրդական մեծ տօնը Խոդինսկոյէ դաշտում, որը սակայն վերջացաւ մի սարսափելի աղետով, որ խորին վիշտ պատճառեց Ն. Կ. Մեծութեանց եւ առհասարակ բոլոր հասարակութեան: Այդ օրը ժողովրդեան պիտի բաշխուէր նաեւ, որ բաղկացած էր $1\frac{1}{2}$ գովանալ երեկոյից, հացից, ընկոյզից եւ ֆադրից, փաքաքաձ բաշկինակների մէջ. ժողովուրդը պիտի ստանար նաեւ քաղաքութեան գաւաթներ: Այդ բաշխումն էլ հենց եղաւ սարսափելի աղետի պատճառը: Ժողովուրդն սկսեց հաւաքուել դեռ նախքան Երեկոյից: Առաւօտեան մօտ ժամի 5-ին դաշտի վրայ 500,000-ից աւել մարդ կար: Կապոցները եւ գաւաթները պիտի բաժանուէին 100 պաւիլիոնում, որոնք շինուած էին մեկ շարքում եւ ծածկուած մեկ ընդհանուր ծածկոցով. պաւիլիոնները միմեանցից բաժանուած էին նեղ անցքերով, որտեղից պիտի անցնէր ժողովուրդը՝ իր բաժինն ստանալուց յետոյ: Պաւիլիոնների դիմաց, դաշտի մութի վրայ գտնուում էր 30 սաժեն լայնութիւն ունեցող մի ձոր, ուղղահայեաց պատերով եւ բազմաթիւ փոսերով ու ջրհորով. ձորակի ծայրին գտնուում էր 2 սաժեն խորութեամբ մի հոր: Առաւօտեան ժամը 6-ին, երբ երեք պաւիլիոնում սկսեցին բաշխումը՝ ժողովրդի ալիքը դիմեց դէպի այն կողմը. յետին շարքերը սաստիկ ուժով սկսեցին ճնշել առաջիններին եւ հրել դէպի ձորն ու փոսերը: Չորս քափուղները ի հարկէ չէին կարող վեր կենալ, եւ շուտով կազմուեց մի կենդանի պատուանդան, որի վրայից անցնելով ժողովուրդը, դիմեց դէպի պաւիլիոնները: Պաւիլիոնները միմեանցից բաժանող նեղ անցքերը նոյնպէս շուտով լցուեցան ժողովրդի հոսանքով, որ շարժվում էր դաշտի կողմից եկածների դեմ. այստեղ էլ շատերը խեղդուեցան: Այդ աղետից սարսափահար եղած, բաշխողներն սկսեցին գաւաթները ձգել ամբոխի մէջ, որով իրաւանցումն աւելի սասկեցաւ եւ զոհերի թիւն աւելացաւ: Շուտով ամբոխը ուժի եկաւ, բոլորեֆեանք սարսափով յետ շարժուեցան, մեկը միւսին հրելով եւ ընկածներին կոխ տալով: Ամբոխային զանգուածը այնքան խիտ էր եւ այնպիսի քափով էր շարժւում, որ երկու արշին խորութեամբ հողում ցցուած սիւնը հանել էին: Չորակի ջրհորը լցուել էր դիակներով: Աղետի վայրից փախչողներից շատերը ուժասպառ եղած ընկնում էին եւ մեռնում: Մեռնողների


ողբն ու կոծր եւ սարսափելի աղաղակները ա՛յանջ էին խլացնում: Ամբողջ աղետը 15 բ. չսեւեց: Երբ երկիւղն անցաւ, մնացածները լաց լինելով սկսեցին փոսերից մեռածներին եւ վիրաւորներին հանել: Վիրաւորներին՝ սարան հիւանդանոցներ, իսկ դիակները Վազան-կովսկոյ գերեզմանատունը: Մեռածների մեծ մասը կանայք էին եւ դեռահասներ: Մարմինները դաշտից հաւաքեցին ամբողջ գիշերը: Դիակները այլանդակուած էին, դուրս պրծած աչքերով, կապտած եւ ուռած մարմիններով, դուրս ընկած եւ ջարդուած անդամներով. ննշման եւ իրարանցման ժամանակ խողիմակոյ գաշի վրայ կանգնած գոլորշին նահնային մշուշի եր նման: Զոհերի ընդհանուր քիւր, ինչպէս յետոյ պաշտօնապէս հաղորդուեց, 2004-ի հասաւ, 1300 մեռած, մնացածները վիրաւորուած: Թագաւոր Կայսրը՝ խորը վշտացած այդ աղետով, հրամայեց իւրաքանչիւր որբացած ընտանիքի տալ 1000 ռուբլի եւ իր հաշուով քաղել բոլոր մեռածներին: Հետեւեալ օրը հոգեհանգիստ կատարուեցաւ, որին ներկայ էին Ն. Կ. Մեծուքիւնները եւ բոլոր օգոստափառ անձինք: Նոցին Մեծուքիւնները ապա այցելեցին բոլոր հիւանդանոցները եւ մխիթարեցին վնասուածներին: Մայր Կայսրուհին այցելեց Մարիինեան հիւանդանոցը, մխիթարեց եւ բոլոր վնասուածներին մաղեր բաշխեց: Հանգստարան գնաց հայր Կրօնշաղկիւն եւ մխիթարական խօսք արտասանեց: 20-ին արդէն բոլոր մեռածները քաղուած էին ընդհանուր գերեզմաններում: Եղելութեան պատճառները որոշելու համար առանձին ֆնկուքիւն նշանակուեց: Աղետի պատճառ շատերը համարում էին Մոսկուայի ոսիկանութիւնը, որ նախընթաց օրը ոչ մի միջոց ձեռք չէր առել եւ աղետի վայրն էր եկել առաւօտեան ժամի 9-ին:

Խողիմակոյ դաշտի ազգային մեծ զբօսանքը բաղկացած էր զանազան տեսակ զուարճութիւններից եւ տեսարաններից: Այդտեղ կառուցուած էր չորս քաւտոն, որոնց մեջ տեղի պիտի ունենային զանազան ներկայացումներ եւ ցոյց պիտի տուէին սովորեցած կենդանիներ: Այդտեղ կային՝ ցիւրկ, կարուսէլներ, կայմեր՝ մրցանակով վեր բարձրանալու համար, կառուցուած էին էսքադներ նուագածուների եւ երգիչների համար, այդտեղ կային զանազան ձեռնածուներ, գուշակողներ, լարախաղացներ, երիտասարդներից եւ օրիորդներից կազմուած պարեր, հարմոնիկի վրայ նշանաւոր ածողներ, ռուսական եւ մալորոսական խմբեր եւ այլն: Պետրովսկիյ պալատի կողմից շինուած էին տեղեր հանդիսատեսների համար. այդտեղ էր շինուած նաեւ արքայական պաւիլիոնը: Ժամի 2-ին արքայական դրօշը սկսեց ծածանուել եւ Ն. Կ. Մեծուքիւնները երեւացին վերին պատշգամբի վրայ, շրջապատուած օգոստափառ անձինքներով եւ

օտարազգի քաղաւորագուններով: Ազգային օրհներգը լսելուց յետոյ, Ն. Կ. Մեծուքիւնները մեկնեցան Պետրովսկիյ պալատը:

Թագադրութեանց հանդէսների վերջին օրն էր մայիսի 26-ը. այդ օրը Մոսկուան նաւապարհ էր ձգում իր սիրեցեալ պետին: Արքայական գնացքը պիտի մեկնէր Բրեսխի վոզզայից: Ն. Կ. Մեծութեանց նաւապարհ ձգելու էին եկել մեծ իշխանները, մեծ իշխանուհիները, նախարարները, Մոսկովայի Դրան պաշտօնաւոր անձինքը: Նոցին Մեծուքիւններն օգոստափառ անձանց հետ մեկնեցան Իլենսկոյ գիւղը, ուր մի քանի օր անցկացրին:

Ռուսական պետութեան ամենահեռաւոր անկիւններն անգամ քաղադրութեան օրը հանդիսով տօնեցին: Կարծես բոլոր քաղաքները միմեանց հետ մրցութեան մեջ էին մտել. իւրաքանչիւրն ուզում էր գերազանցել միւսին: Բազմաթիւ քաղաքներ մայիսի 14-ը մի որեւէ հասարակական հիմնարկութեամբ յիշատակաց արժանի արին: Յնձութեամբ եւ հրնուանով տօնեց մայիսի 14-ը Ռ. Ժողովուրդը:



3564
3565
3566
3567
3568
3569

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0495417

ՀՀ Ազգային գրադարան



NL0495412

ՀՀ Ազգային գրադարան



NL0495410

ՀՀ Ազգային գրադարան



NL0495408

ՀՀ Ազգային գրադարան



NL0495407

ՀՀ Ազգային գրադարան



NL0495406

